# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**9 հունիսի 2014 թվականի N 96-Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԵԿԱՆ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետով և <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 49-րդ և 68-րդ հոդվածների դրույթներով, համաձայն ՀՀ կառավարության 2011թ. մարտի 3-ի <<Պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող առևտրային կազմակերպությունների շահույթի բաշխման, շահութաբաժինների հաշվարկման և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի դեկտեմբերի 5-ի N 1194 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> N 202-Ն որոշմամբ հաստատված կարգի, **որոշում եմ՝**

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի ենթակայության առողջապահական փակ բաժնետիրական ընկերությունների կողմից 2013 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման ենթակա տարեկան շահութաբաժինների չափը՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզային ենթակայության փակ բաժնետիրական ընկերությունների տնօրեններին՝ մինչև 2014թվականի հոկտեմբերի 1-ը, սահմանված կարգով, Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարել շահութաբաժնի առկա պարտավորությունը:

3. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

**ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Վ. ՀԱԿՈԲՅԱՆ**

2014թ. հունիսի 9
ք. Կապան

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզպետի
2014թ.հունիսի 9-ի N 96-Ա որոշման

# Ց Ա Ն Կ

2013 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներով ՀՀ 2014թ. պետական բյուջե շահութաբաժին վճարող փակ բաժնետիրական ընկերությունների

| N | Ընկերության անվանումը | Վճարման ենթակա շահութաբաժնի գումարի չափը (հազ. դրամ) |
|---|---|---|
| 1 | «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ | 828.0 |
| 2 | «Քաջարանի բժշկական կենտրոն» ՓԲԸ | 519.9 |
| 3 | «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ | 140.0 |
| 4 | «Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ | 560.0 |
| 5 | «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ | 120.0 |
| 6 | «Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲԸ | 14.0 |
| 7 | «Սյունիքի մարզային արյան փոխներարկման կայան» ՓԲԸ | 67.0 |
| 8 | «Տաթևի առողջության կենտրոն» ՓԲԸ | 125.6 |
| 9 | «Վերիշենի բժշկական ամբուլատորիա» ՓԲԸ | 21.0 |
| 10 | «Դարբասի առողջության կենտրոն» ՓԲԸ | 9.0 |
| 11 | «Անգեղակոթի բժշկական ամբուլատորիա» ՓԲԸ | 10.5 |
| 12 | «Նորաշենիկի ԱԱՊԿ» ՓԲԸ | 185.5 |
| 13 | «Բռնակոթի ԱԱՊԿ» ՓԲԸ | 21.0 |
| 14 | «Գորայքի ԱԱՊԿ» ՓԲԸ | 4.0 |
| 15 | «Տեղի ԱԱՊԿ» ՓԲԸ | 22.0 |
| 16 | «Շինուհայրի ԱԱՊԿ» ՓԲԸ | 8.8 |
| 17 | «Խնձորեսկի ԱԱՊԿ» ՓԲԸ | 14.8 |

ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար՝ Ռ.Ղազարյան